ՓՈՔՈՐԳԻՐՔԻՆ ԳՐԳԳԻՐՔՆ „ԵՐԵՎ“

№ 1

ԻՆՉ Է ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Թարգ. Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ

ԳԻՆԸ 10 ԿՈՊ.

ԲԱԿՈՒ
Տպարան Ն. Երևանցեանի
1917

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴՐԱԴԱՐԱՆ „ԲԲԵՒ“

№ 1

ԻՆՉ Է ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Ա II / 25143

Թարգ. Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ

ԹԱԳՈՒ

Տպարան Ն. Երևանցեանի

1917

Ի՞ՆՉ Է ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

«Հասարակապետութիւն» ասելով շատերին թւում է, որ դա մի այնպիսի տէրութիւն է, ուր կառավարութեան իշխանութիւնը թոյլ է, ուր ամեն մարդ անում է այն, ինչ որ ցանկանում է, ուր ամեն ոք՝ օրէնքից չքաշուելով, կարող է անկարգութիւններ անել ու խախտել խաղաղ բնակիչների իրաւունքները։ Այդ կարծիքը միանգամայն սխալ է։ Հասարակապետութեան մէջ կառավարութեան իշխանութիւնը ոչ պակաս զօրաւոր է, քան միապետական երկիրներում. այնտեղ էլ գոյութիւն ունին այնպիսի խիստ օրէնքներ, ուրիշի իրաւունքները խախտող, ամէն յանցանք, ամեն անիրաւութիւն պատժող նոյնպիսի դատարաններ և կարգ ու կանոնի, կեանքի խաղաղ ընթացքի վերայ հսկող նոյնպիսի ոստիկանութիւն։

Եթէ կառավարութեան գլուխը կանգնած է մի մարդ՝ թագաւոր, կայսր, վեհապետ, սուլթան՝ կոչւում է միապետութիւն։

Միապետական երկրում միապետի իշխանութիւնն առհասարակ հօրից անցնում է ժառանգաբար որդուն, կամ մօտիկ ազգականին։ Ժողովրդին թագաւոր ընտրելու դէպքեր հազիւ է պատահում, սովորաբար այդ լինում է այն դէպքում, երբ թագաւորը մեռնում է իրենից յետոյ ոչ մի մօտիկ ազգական չթողնելով, կամ երբ նոր թագաւորութիւն է հիմնւում։ Այդպէս է եղել Ռուսաստանում 300 տարի առաջ ռուսաց այժմեան գահընկէց թագաւորի նախահօր՝ Միխայիլ Ֆէօդորովիչի ընտրութեան ժամանակ, այդպէս եղաւ Բուլգարիայում, երբ նա ազատուեց տաճկական տիրապետութիւնից, այդպէս եղաւ եւ վերջերս Նորվեգիայում, երբ սա բաժանուեց Շվէդիայից։

Որքան էլ թագաւորը խելօք, ուժեղ ու բանիմաց լինի՝ չի կարող նա մէն-մենակ, անձամբ կառավարել տէրութեան բոլոր գործերը։ Նրան անխուսափելի կերպով անհրաժեշտ են օգնականներ։ Եւ նա ընտրում է այդ օգնականներին՝ մինիստրներին իր ցանկութեան համաձայն և յանձնում է նրանցից իւրաքանչիւրին կառավարութեան մի որ և է մասը։ Մինիստրներն էլ իրենց կողմից են հրաւիրում օգնութեան գաղնագան պաշտօնեաների և նրանց հսկողութեանը յանձնում այս կամ այն գործը։ Վերջ-ի վեր-

Ջոյ գուրս է գալիս, որ ժողովուրդը գործ չի ունենում ոչ միայն թագաւորի, այլև նրա մինիստրների հետ և միապետի կամքը նրան հասնում է մի ամբողջ շարք պաշտօնեաների ատիճաններից։

Մինիստրներն ամբողջովին կախումն ունին կայսրից։ Նա է միայն քննում, թէ լաւ են կատարում արդեօք նրանք իրենց վստահացած պարտականութիւնը. նա միայն կարող է նրանց զրկել կամ փոխադրել պաշտօնից։ Մինիստրներն են կառավարում պետութեան բոլոր եկամուտները, նրանք են պետական փողերը ծախսում հէնց իրենց կազմած և թագաւորից հաստատուած նախահաշուի համաձայն։ Թէ որ ատիճանի արդարացի է գործադրուում այդ նախահաշիւը, նրանք ոչ ոքի այդ մասին հաշիւ չեն տալիս, բացի թագաւորից։ Թագաւորն իր կամքով կարող է հարկերն ու տուրքերը պակասացնել կամ շատացնել, չհաւաքել ժողովրդի այս կամ այն մասից. նա կարող է տէրութեան ծախսերը կրճատել, կամ ընդհակառակն, աւելացնել, կարող է իր անձնական պէտքերի համար նրանցից ընտրել այն գումարները, որն ինքը կարևոր կհամարի։

Մինիստրները կազմում են օրէնքները, իսկ թագաւորը հաստատում է և նրանք իրենք էլ

հսկում են, որ այդ օրէնքները խստիւ կատարուեն։ Թագաւորն ու իր մինիստրներն նոյնպէս ենթարկւում են օրէնքներին, բայց քանի որ օրէնքի վերացնելը, կամ հինը նորի փոխարինելը միանգամայն թագաւորից է կախուած՝ նա միշտ էլ կարող է ոչնչացնել այն օրէնքը, որն իրեն համար այնքան էլ ձեռնտու չէ։ Այն պետութիւնը, որ կառավարւում է այդ եղանակով, կոչւում է *անսահման միապետութիւն*, որովհետև այդտեղ միապետի կամքը չի սահմանափակուած մի որ և է ուրիշի կամքով։ Բոլոր հպատակները պարտաւոր են անպայման կատարել նրա տուած օրէնքները, և իրաւունք չունեն քննադատելու՝ լաւ են թէ վատ այդ օրէնքները, բաւարարութիւն են տալիս իրենց պահանջներին՝ թէ ոչ։

— —

Բացի անսահման միապետութիւնից կայ և *սահմանադրական միապետութիւն*։ Սրա կառավարութեան գլուխը կանգնած է նոյնպէս ժառանգական միապետը և այլ և այլ կարգի գործեր վարում են մինիստրները. բայց այստեղ ժողովուրդը նոյնպէս մասնակցում է պետութեան կառավարելու գործին. գոնէ մինիստրների գործունէութիւնը ստուգելու իրաւունք ունի։ Այդ նպատակով ժողովուրդը ընտրում է իր լիա-

զօրներին՝ պատգամաւորներին, որոնք կազմում են առանձին ժողով՝ պարլամենտ, պարլատ և այլն։ Պատգամաւորների այդ ժողովը խորհրդակցութեան է առնում մինիստրների կազմած օրէնքները. քննելով՝ մերժում է այնպիսիները, որոնց ազգաբանութեան համար անօգուտ է գրտնում, միւսների մէջ իրեն դիտողութիւններն ու փոփոխութիւններն է մտցնում, մի քանիսն էլ, վերջապէս, համաձայնում է ամբողջովին ընդունել։ Կայսրն օրէնքը հաստատում է արդէն պատգամաւորների քննութիւնից ու ընդունելուց յետոյ, և միայն այդպիսի օրէնքն այժ ունի, այդպիսի օրէնքին միայն բոլորեքեան պարտաւոր են հնազանդուիլ։

Սահմանադրական կայսրութեան մէջ թագաւորն ինքն է ընտրում ու նշանակում մինիստրներին, ինչպէս անսահման կայսրութեան մէջ, միայն այն տարբերութեամբ, որ այդ մինիստրները իրենց գործունէութեան մասին հաշիւ են տալիս ոչ միայն թագաւորին, այլ և պատգամաւորներին՝ ժողովրդից ընտրուած ներկայացուցիչներին։ Պատգամաւորներն իրաւունք ունին իրենց դժգոհութիւնն արտայայտել, եթէ որ և է անհոգութիւն նկատեն նրանց գործերի մէջ, իրաւունք ունին հարցապնդում անել նրանց վարչութեան մէջ կատարուած ամեն մի գեղծմուն-

քի համար։ Անընդունակ նկատուած մինիստրին պատգամաւորներն իրաւունք չունին ինքնագրոլոթ պաշտօնից հեռացնել, բայց իրաւունք ունին արտայայտել իրենց անվստահութիւնը դէպի նա և այդ անվստահութիւնը տարածւում է բոլոր մինիստրների վերայ, որովհետև բոլոր մինիստրները միասին կազմում են մի «կաբինէ», ու ամենքն էլ շատ թէ քիչ չափով պատասխանատու են մէկը միւսի արածի համար։ Այդ հանգամանքներում ժողովրդի ներկայացուցիչներն, այդպիսի մինիստրութեան մոցրած ոչ մի օրէնքը չեն ընդունում։ Կայսրը կամ-ակամայ ստիպուած է լինում արձակել այդ մինիստրութիւնը, որն անհաճելի է ժողովրդի ներկայացուցիչներին և ընտրել նորը վստահութիւն վայելող մարդկանցից։ Երբեմն, ասենք, նա այլ միջոցի էլ է դիմում. նա արձակում է ներկայացուցիչների ժողովը և նոր ընտրութիւն է յայտարարում։ Եւ այդ այն նպատակով, որ իմանայ թէ ժողովուրդն իր պատգամաւորների հետ համամիտ է թէ ոչ և երբ երևում է, որ նա համամիտ է և որ նոր ժողովն էլ նոյնպէս անվստահ է դէպի մինիստրները՝ այն ժամանակ նա՝ թագաւորը ստիպուած՝ դիջում է։

Ժողովրդական ներկայացուցիչների ժողովը ակրութեան բոլոր էլ և մտից նախահաշիւն ըս-

տուգում և մանրազնին քննութեան է առնում։ Ոչ մի հարկ, ոչ մի տուրք չի կարելի պահանջել հասարակութիւնից, առանց նրա թոյլտուութեան։ Նրանք նոյնպէս ուշադրութեամբ աչքի են անցկացնում ծախքերի բոլոր յօդուածներն ու կրճատում այնպիսիները, որոնք չափից դուրս իրենց ծանր են թւում ժողովրդի համար։ Պատգամաւորները հէնց իրենք են որոշում, թէ թագաւորը, նրա ընտանիքն ու պալատը տարեկան որքան պիտի մսխէ։ Տէրութեան փողերը կարգադրելու այդ իրաւունքը պատգամաւորների ժողովին աւելի ոյժէ տալիս։ Այնպէս որ, թագաւորը, եթէ ուզենայ մի որոշ ժամանակ նրանց ժողովի չհրաւիրել՝ չէ կարող, որովհետև առանց նրանց կարգադրութեան ոչ ոք իրաւունք չունի ոչ հարկեր պահանջել և ոչ վճարել. մինչև անգամ ինքը կայսրը չէ կարող ոչ մի կոպէկ ստանալ պետական գանձարանից։

Սահմանադրական երկիրներում կայսեր անձը համարւում է ազատ պատասխանատուութիւնից, այսինքն ոչ ոք իրաւունք չունի դատել վեհապետին նրա արարքների համար կամ նրա գործերից հաշիւ պահանջել։ Շնորհիւ այդ բանի՝ մի թագաւոր՝ որ իր ժողովրդի շահերի մասին չի հոգում, կամ չի հասկանում թէ ինչի մէջէ կայանում այդ շահը՝ կարող է ազգաբանութեան

համար վնասակար որ և է կարգադրութիւն անել. որպէս զի խոյս տրուի մի այդպիսի վտանգից՝ սահմանադրական-միապետական երկիրներում մի այսպիսի օրէնք գոյութիւն ունի, այն է՝ կայսեր ամեն մի կարգադրութիւնը, ամեն մի հրահանգը օրինական է համարւում միայն այն դէպքում, երբ նրա տակ ստորագրում է մինիստրներից մէկն ու մէկը։

Բոլոր մինիստրները պատասխանատու են ժողովրդական ներկայացուցիչների ժողովի առաջ, հետևաբար և իւրաքանչիւրը նրանցից վախենում է ստորագրել կայսերական այն հրահանգը, որը ներկայացուցիչների հաւանութեան չէ արժանացել։

— —

Անսահման միապետութեան կայսեր հպատակներից պահանջւում է, առանց դէս ու դէնի, անպայման հպատակութիւն նրա հրատարակած կարգադրութիւնների՝ օրէնքների առաջ։ Այդ օրէնքները լաւ են թէ վատ, օգտակար են թէ վնասակար, այդ նրանց գործը չէ. նրանք պարտական են խորապէս հաւատալու, որ նրանց վրայ մտածում են, որ նրանց մասին հոգս են քաշում թագաւորն ու նրա մինիստրները։

Եթէ նրանք նկատում են մի որ և է չինովնիկի իր պաշտօնի ի չարը գործ դնելը, ի-

զուր է լինում նրա վրայ գանգատուիլը, որովհետև այդ գանգատը անցնում է հէնց այն մինիստրի կամ նահանգապետի ձեռքն, որը նշանակում է այդ չինովնիկին։ Եթէ նրանք ցանկանան հասցնել ի գիտութիւն թագաւորի իրենց կարիքների և ցանկութիւնների մասին, նրանց ձայնը կխեղդուի այն երկար մի շարք չինովնիկներից, որոնք կանգնած են նրանց և թագաւորի մէջտեղը։

Բոլորովին այլ կերպ է սահմանափակ կամ սահմանադրական միապետութիւններում։

Այդտեղ ամեն մի քաղաքացի պարտաւոր է համարում քննադատել թագաւորից և ժողովրդի ներկայացուցիչներից ընդունուած և հաստատուած օրէնքները։ Նրանք քննում են թէ որքան այդ օրէնքները համապատասխան են տեղական պահանջներին, նկատողութեան են առնում նրանց այն պակասութիւններն ու փոփոխութիւնները, որոնք կարևոր են գտնում մտցնել նրանց մէջ։

Չինովնիկների անհոգութեան ու պաշտօնի ի չարը գործ դնելը նոյնպէս անուշադիր չեն մնում, բոլորն էլ գիտեն, որ նրանց մասին կարելի է յայտնել մինիստրներին և դրա համար նրանք շտապում են անմիջապէս ուղղել այդ, որպէս զի չզրկուեն ժողովրդի վստահութիւնից։ Ժողովրդական ներկայացուցիչների ժողովի հա-

մար պատգամաւոր ընտրելիս՝ նոյնպէս հարկ է լինում ամեն մէկին լաւ մտածել, լաւ խորհել, այն է՝ ընտրել այնպիսի մարդու, որը լաւ գիտենայ տեղական գործերը, որ հարկ եղած դէպքում նա կարողանայ բացատրել այդ և ուրիշներին. անպայման ազնիւ մարդու, որ ոչ մի հրապոյրից չի շողոքորթուիլ և չի դաւաճանիլ իր ընտրողներին, խելացի ու առողջ դատողութեան տէր մարդու, որ կարողանայ ինքն անձամբ գլուխ դուրս տանել պետական բարդ խնդիրներում, կամ դիմել լուսամիտ մարդկանց օգնութեան, որոնք անշահախնդիր ցանկանում են ժողովրդի բարիքը։ Այդ բոլորի համար սահմանադրական պետութեան մէջ անհրաժեշտ է, որ ամեն մարդ լրագիր ու գրքեր կարդալ իմանայ, ժողովներում ուրիշների հետ շփուելն ունենայ, կարողանայ լսել զանազան, կարծիքներ իրեն կրաղեցնող խնդիրների վերաբերմամբ ու ինքն էլ համարձակ, բացարձակ արտայայտէ իր մտքերը, որպէս զի իմանայ թէ ինչ ընդդիմախօսութիւններ կըլինեն իր ասածների դէմ և իմանայ թէ ով իր ասածները համակրում է։ Ահա թէ ինչու համար բոլոր սահմանադրական երկիրներում գոյութիւն ունի խօսքի և մամուլի ազատութիւն, անձի անձեռնմխելիութիւն. այսինքն անկարելի է, որ մի որևէ մէկը ենթարկ-

ուի պատասխանատուութեան իր ճառի համար, անկարելի է, որ մի որևէ մէկը զրկուի ազատութիւնից և ենթարկուի մի որևէ ճնշումի առանց դաղարանական վճռի։

Հասարակապետական կառավարութեան մէջ առանձին անհատներին վիճակուած է աւելի ևս մտածել և հոգ տանել հասարակական գործերի վերաբերմամբ, քան սահմանադրական միապետութեան մէջ, որովհետև այդ ձևի կառավարութեան մէջ ժողովուրդն աւելի մեծ մասնակցութիւն է ունենում, քան թէ այլ եղանակի պետութիւնների մէջ։

Ամբողջ ժողովուրդը, բոլոր քաղաքացիք, մի որև է երկրի չեն կարող, հասկանալի է, անմիջական կերպով և օրէնքներ յօրինել և նրանց իրագործել։ Մինչև անգամ փոքր համայնքներում մի որև է վճիռ կայացնելով՝ համայնական ժողովում. ժողովուրդը նրա գործադրութիւնը յանձնարարում է յատուկ ընտրուած մարդկանց՝ գիւղական տանուտէրին, տեղական վարչութեան և այլն։ Հասարակապետութեան մէջ օրէնքների հրատարակութեան իրաւունքը պատկանում է ժողովրդից ընտրուած ներկայացուցիչների ժողովին— *Սահմանադիր ժողովին*, իսկ գործադիր իշխանութեան գլխաւորի՝ ժառանգական միապետի տեղը՝ բռնում է ընտրած նախագահը՝ պրեզի-

զանը, (Président) որն ընտրում է ոչ ընդմիշտ, այլ սովորաբար մի քանի տարով և որի իշխանութիւնը միշտ էլ սահմանափակուած է երբեմն աւելի, երբեմն պակաս։

Եթէ Հասարակապետութեան մէջ հասարակապետութեան մի խաւը կամ մի դասակարգը իշխում է բոլոր մնացածների վրայ, այն ժամանակ ստեղծւում է, այսպէս ասած, *արիստոկրատիական* հասարակապետութիւն։

Այսպիսի հասարակապետութեան մէջ իշխանութիւնը պատկանում է իշխող դասակարգի ներկայացուցիչների ժողովին. հէնց այդ դասակարգն էլ ընտրում է իր միջից պրէզիդանին-նախագահին։ Սկզբներում գոյութիւն ունէին մի քանի այդպիսի հասարակապետութիւններ, ուր իշխանութիւնը մի տեղ աւելի յայտնի, մի ուրիշ տեղ՝ ամենահարուստ մարդկանց ձեռքումն էր գտնւում։ Բայց այժմ գոյութիւն ունեն միայն ռամկավարական հասարակապետութիւններ. այսինքն այնպիսիները, ուր քաղաքական իրաւունքների տէրը՝ հանդիսանում է բոլոր ժողովուրդը, այնէ՝ ժողովրդի բոլոր դասակարգերի անհատները, որոնք որոշ հասակի են հասած և արատաւորուած չեն դադարանով — ընտրում են իրենց ներկայացուցիչները ու ամեն մէկը իրաւունք ունի մինչև անգամ հասարակապետութեան

պրէզիդան դառնալու։ Այսպէս Ֆրանսիական հասարակապետութեան նախկին պրէզիդանը՝ Լուբէն մահուա ծախողի ընտանիքից էր, իսկ այժմեանը՝ երիտասարդ հասակում գրասենեակի հասարակ ծառայող էր։ Հիւսիսային-Ամերիկայի Միացեալ Նահանգների Հասարակապետութեան ամենայայտնի պրէզիդաններից մէկը՝ Աբրամ Լինկօլն, որի օրով վերջ արուեցաւ նեգրների ստրկութեան, երիտասարդ հասակում անտառից գետերով գերան քշող էր։

Ֆրանսիայում պրէզիդանին ընտրում է, այսպէս ասած, Ազգային ժողովը, որ կազմուած է պալատի պատգամաւորներից (բոլոր ժողովրդի ներկայացուցիչից) և Սենատից, որի անդամները (300 հոգի) 40 տարեկանից պակաս չպիտի լինեն և որոնց ընտրում են իւրաքանչիւր դեպարտամենտի (նահանգի) տեղական պատգամաւորներն և տեղական ինքնավարութեան ներկայացուցիչները։ Պրէզիդանը հաշուում է գործադիր իշխանութեան գլուխը, նա է նշանակում մինիստրներին ու բարձրաստիճան պաշտօնեաներին, նա է առաջարկում ցանկացած օրէնքները պատգամաւորների պալատին քննելու համար, որը պալատը կարող է և չընդունել։ Եթէ երկու պալատները, այն է՝ պատգամաւորների պալատը և սենատը մի որևէ օրէնք ընդունում

են, պրէզիդանը չի կարող նրան չհաստատել։ Նա իրաւունք չունի պալատի համաձայնութիւնը չստացած՝ պատերազմը յայտարարել, իսկ օտար պետութիւնների հետ դաշինք կապել կարող է, միայն ոչ կարևոր գործերի վերաբերմամբ, բոլոր այն կարևոր պայմանագրերը, որ վերաբերում են վաճառականութեան, պետական ֆինանսներին, հող ձեռք բերելուն, կամ զիջում անելուն — անհրաժեշտ է երկու պալատների հաւանութիւնն ու վաւերացումն։ Պրէզիդանը այնպէս, ինչպէս և ամեն մի կայսր, ոչ ոքի առաջ պատասխանատու չէ իր պաշտօնական գործողութիւնների համար, բայց նա էլ, որպէսզի իր բոլոր հրամանները օրինական ոյժ ունենան, պէտք է, որ մինիստրներից մէկն ու մէկին ստորագրել տայ։

Ամեն մի մինիստր վարում է կառավարութեան մի որևէ մասը և պատասխանատու է իր մինիստրութեան մէջ կատարուած ամեն մի շահագործման համար պալատի առաջ. բացի դրանից, բոլոր մինիստրները միասին պատասխանատու են կառավարութեան ամբողջ գործողութիւնների համար։

Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների Հասարակապետութեան նախագահը ընտրւում է բոլոր ժողովրդից, այսինքն բոլոր իրա-

ունք ունեցող քաղաքացիներից, երկաստիճան ընտրութեամբ. ժողովուրդը ընտրում է պատուիրակներ, իսկ դրանք ձայների մեծամասնութեամբ ընտրում են նախագահ չորս տարով։ Նախագահը նշանակում է բոլոր մինիստրներին ու գլխաւոր աստիճանաւորներին և նրա մինիստրները միմիայն նրան են հաշիւ տալիս իրենց գործողութիւնների համար ու պատասխանատու են միմիայն նրա առաջ։ Բայց դրա փոխարէն նախագահն ինքը պատասխանատու է ժողովրդի ներկայացուցիչների պարտի առաջ։ Օրէնքներ կազմելու իրաւունքն պատկանում է ժողովրդի ներկայացուցիչներին, եթէ պրէզիդանը համաձայն չէ պարտի այդ օրէնքների հետ՝ նա կարող է վերադարձնել նրանց նորից քննելու համար, բայց այդ նոր քննութիւնից յետոյ արդէն պարտական է ընդունել։

Ամենամեծ մասնակցութիւնն երկրի կառավարութեան մէջ Շվեցարական ժողովուրդն ունի։

Փոքրիկ Շվեցարիան ոչ միայն ռամկավարական, այլ և ֆէդէրատիւ (Fédératif) — այն է՝ դաշնակցական հասարակապետութիւն է։ Նա բաղկացած է 22 կանտոններից (նահանգ), որոնք լիակատար ինքնուրոյնութիւն ունեն այն ամեն բանում, ինչ որ վերաբերում է տեղական ինքնա-

Ա 25143



վարութեան, և իւրաքանչիւր Կանտոն իր առանձին օրէնքներն ու սովորութիւններն ունի։

Օրէնքների մեծ մասը, որ ընդհանուր է ամբողջ կառավարութեան համար, գործադրւում են իւրաքանչիւր կանտոնում իրենց սեպհական պաշտօնական մարդկանց միջոցով։

Զօրքին խնամում են կանտոնները, իսկ դաշնակցական կառավարութիւնը, ընդհանուր կանոններ է դնում, նշանակում է աւագ սպաներ և իր վրայ է առնում հրամանատարութիւնը պատերազմի ժամանակ։ Դաշնակցական կառավարութիւնը, հսկում է տեղական պաշտօնեաների վրայ և պաշտպան հանդիսանում մասնաւոր մարդկանց՝ նրանց ճնշումների դէմ։

Դաշնակցական կառավարութիւնը կազմուած է՝ ազգային խորհրդից՝ ժողովրդի ներկայացուցիչների պալատից, որոնց ընտրում են բոլոր քաղաքացիները (բացի հոգևոր կոչում ունեցողներից, դատարանով արատաւորուածներից և 20 տարեկանից ոչ պակաս եղողներից) և նահանգների խորհրդից, որի համար իւրաքանչիւր կանտոն 2-ական պատգամաւոր է ընտրում։ Այդ 2 խորհուրդը՝ միասին ընտրում են գործադիր իշխանութիւն 7 անդամից բաղկացած՝ ֆէդէրացիայի խորհրդի համար։ Այդ անդամները կատարում են մինիստրների պաշտօնը և իրենց մէջ

բաժանում են կառավարութեան բոլոր գործերը։ Նրանք ընտրում են իրենց միջից հասարակապետութեան «պրէզիդանին»։ «Պրեզիդանը» նոյնպէս վարում է՝ ինչպէս ֆեդէրատիւ խորհրդի միւս անդամները, գործերի մի որեւէ մասը։ Նրան ընտրում են ընդամենը մէկ տարով և նա կատարում է պետութեան գլխաւորի դերը. գլխաւորապէս օտար պետութիւնների հետ ունեցած յարաբերութիւնները, նրա միջոցով են տեղի ունենում։

Իրենց տեղական գործերի համար իւրաքանչիւր կանտոն, ունի իր օրէնսդրական ատեանը՝ ժողովրդի ներկայացուցիչներից։ Այդ ատեանը՝ բարձրագոյն խորհուրդը հրատարակում է օրէնքներ, որոշում է տուրքեր, հսկում է պաշտօնեաների գործունէութեան վրայ և նշանակում է կարևորագոյն պաշտօնեաներին։ Կանտոններում գործադիր իշխանութիւնը, պատկանում է 5—9 հոգուց բաղկացած մի խորհրդի, որոնց ընտրում է՝ կամ բարձրագոյն խորհուրդը, կամ հէնց ինքը ժողովուրդը։

Մի քանի «կանտոններ», բարձրագոյն խորհուրդ չեն ընտրում, այլ բոլոր գործերը վճռում են բոլոր քաղաքացիների ընդհանուր ժողովում։ Այդ տեսակ ժողովները լինում են ընդհանրապէս բացօդեայ։ Լանդամանը (Landamman) —

կանտոնի աւագը նստում է սեղանի առաջ, որ տրուած է լինում ընդարձակ մարգագետնում կամ դաշտում. կանտոնի բոլոր տղամարդիկ շարուում են նրա շուրջը, իսկ նրանց յետեւը՝ կանայք և երեխայք։ «Լանգամանը» պատմում է՝ թէ ինչ է արուել անցեալ տարի, յետոյ կարդում է աղօթք ու անցնում է այն հերթական խնդիրներին, որ պիտի վճռէ ժողովը։

Նա առաջադրում է նոր օրէնքներ, ժողովը քննում է այդ օրէնքները, մի մասը ընդունում է, միւս մասը՝ երբեմն մերժում. քաղաքացիներն էլ իրենք իրենց կողմից են առաջարկում այս կամ այն միջոցը, որոնք օգտակար են համարում ժողովրդի համար, այդ էլ նախ-քան ընդունելը՝ մանրամասն քննութեան են ենթարկում. այնուհետեւ որոշում են տուրքերը, հաստատում են առաջիկայ տարուայ ելեմտից նախահաշիւը. հարկ եղած դէպքում աւագին իրաւունք են տալիս փոխառութիւն անել ընդհանուր գործի համար, եւ վերջապէս, ընտրում են խորհրդի անդամներ, որոնք աւագի հետ միասին հանդիսանում են թէ գործադիր իշխանութիւն եւ թէ այլ պաշտօնական անձինք։

Այսպիսով այստեղ ժողովուրդը—ինքը, առանց մի որեւէ ներկայացուցիչի, վճռում է իր

գործերը, բայց այդ, հասկանալի է, հնարաւոր է միայն այնտեղ, ուր բնակչութիւնը շատ չէ։ 100,000 մարդ, բնական է, չէ կարող ժողովի գալ ու կանոնաւոր քննութեան առնել իր գործերը։

Հասարակական գործերը բացի այդպիսի համայնական ձևով կարգաւորելուց զատ մի քանի սակաւաբնակ «կանտոններում», պատահում են դէպքեր, երբ բոլոր Շվէյցարիացիք անմիջական մասնակցութիւն են ունենում պետական կարևոր խնդիրների վճիռների մէջ։ Այդ լինում է այն ժամանակ, երբ անհրաժեշտ է համաձուում սահմանադրական հասարակապետական հիմնական օրէնքների մէջ մի որևէ փոփոխութիւն մտցնել։ Այն ժամանակ դաշնակցական կառավարութիւնը ուղարկում է բոլոր քաղաքացիներին հարցում թէ՝ ցանկանում են նրանք արդեօք, որ սահմանադրութեան մէջ այս ինչ փոփոխութիւնը մտցնուի և նրանցից ամեն մէկը պարտաւոր է պատասխանել *այո՛* կամ *ոչ*։ Երբ առանձին նահանգներն էլ են ցանկանում փոփոխութիւն մտցնել իրենց սահմանադրութեան մէջ, նրանք էլ այդպիսի հարցումով են դիմում ժողովրդին։ Երբեմն այդ հարցումն անուում է ոչ միայն սահմանադրութեան օրէնքների փոխառութեան առթիւ, այլև ուրիշ օրէնքների վե-

բաբերմամբ, որոնք ծանրակշիռ նշանակութիւն են ունենում ամբողջ պետութեան, կամ մի առանձին «կանոնի» համար։ Բայց այդ անում է միայն այն դէպքում, երբ բազմաթիւ պահանջողներ են լինում, օրինակ՝ ընդհանուր պետական օրէնքի փոխփոխութեան համար պահանջւում է ոչ պակաս քան 30,000 հոգի։

Այդպիսով կարելի է ասել, որ Շվեյցարիան լիակատար ռամկավարական պետութիւն է։ Այնտեղ բոլոր կառավարութիւնը գտնւում է ժողովրդի ձեռքին, բոլոր պաշտօնեաներն ընտրւում են կամ ուղղակի ժողովրդից, կամ նրա ներկայացուցիչներից եւ ներկայացնում են ժողովրդի կամքը կատարողներ, որն արտայայտւում է, կամ պատգամաւորների պալատով կամ անմիջապէս հէնց իրենց քաղաքացիներով։ Այդ պայմաններում ոչ մի ներքին յուզում, ոչ մի ընդհարում առանձին «կանոնների» մէջ կամ բընակչութեան զանազան խաւերում տեղի չեն ունենում և չեն խանգարում կեանքի խաղաղ ընթացքը. վարչական բոլոր ճիւղերում, ժողովրդի բոլոր խաւերում, թագաւորում է կատարեալ կարգապահութիւն և պարտաճանաչութիւն դէպի հանրային գործը։

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ